

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆՔ.

Լազարեան ՃԵՄԱՐԱՆԻ ՅՈՐԵԼԵՆԱԼՎԱՆ ՅԱՆՃԱԺՈՂՈՎՐ  
ՄՈԽՈՒՉՈՎԱՅԻց յատուկ պատգամաւորութիւնն է ուղարկել  
ո. Էջմիածին, որը յունիսի 1-ին ներկայանալով Նորին Վե-  
հափառութեան՝ մատուցել է հետեւալ գրութիւնը.

Ձերդ Սրբազնակառար Օծութիւն

Շատուածարեալ Հայրապետ.

Տարւոյս գեկտեմբերի 9-ին տօնուելու է յորելենտկան  
հանդիսով Լազարեան ՃԵՄԱՐԱՆԻ Արևելեան Լեզուաց հա-  
բիւրամեակը, որ լրացաւ սոյն մայիսի 10-ին:

Այս տարեթիւը նշանակալից է:

Լազարեան ՃԵՄԱՐԱՆԸ ընդհանուր հայոց անդրանիկ  
կանոնաւոր դպրոցն է, միակը՝ որ այսօր կոխում է իւր  
երկրորդ հարիւրամեակի շեմքը:

Նա ուղարակայոցս մայը մննդարանն է:

Մի ամբողջ դար շարունակաբար պատկառելի յորե-  
լեալը տուել է հայ ազգին նրա ամենափայլուն դէմքերը,  
որոնց անունները կ'մնան դարուս հայ դպրութեան և հան-  
րային կեանքի պատմութեան էջերում. տուել է նշանաւոր  
հայագէտներ, խոշոր պետական մարդիկ, առաջնակարգ  
գրական և հասարակական գործիչներ, կրթուած եկեղե-  
ցականներ, հմուտ մանկակարծներ և հազարաւոր համեստ  
աշխատաւորներ զանազան ասպարէզներում՝ լոելեայն ծա-  
ռայող հայրենի ժողովրդեան՝ համաձայն հիմնադիրների  
սրբազան աւանդին:

Անհնար է երևակայել հայագիտութիւնը աւանց իմինի  
և Պատկանեանի, հայ գրականութիւնը՝ առանց Պատկան-  
եանի և Շահազիզի, հայ դպրոցական գործը՝ առանց Եղեանի  
և Շանշեանի, հայ մանկավարժութիւնը՝ առանց Մանդին-  
եանի և Բահաթրեանի:

Հայ մտաւոր կեանքի գիշերաժամին ծնաւ ՃԵՄԱՐԱՆԸ  
և իւր ծննդեամբ հայ ազգին լուսաւորութեան այզեծագ  
աւետեց:

Այս դուզնաքեայ տողերում անկարելի է ամփոփել կազարեան ձեմարանի նշանակութիւնը հայ գրականութեան և կեանքի համար անցեալում: Պարտք ենք համարում միայն վկայել, որդիարուս մտաւոր յառաջադիմութեան պայքարում կազարեան սամսերը մարտիկների առաջին շարքն են կազմել, մաքառելով խաւարի և տղիտութեան դէմ:

Շարունակելով իւր արդասաւոր գործունէութիւնը և մեր օրերում՝ ձեմարանը ձրիաբար մնունդ և ուսում է մատակարարում բացառապէս չքաւոր հայ մանուկներին, տալով նոցա պարտաւորեալ ուսում հին և նոր հայ լեզուի, նախնի և արդի գրականութեան և անարգել բացում է նոցա առաջ համալսարանական ուսման ուղին՝ վերջին առաւելութեամբ գերադաս լինելով քան միւս հայ դպրոցները:

~~Ձեմարանի~~ լուսաւոր գործունէութիւնը յօգուտ դաստիարակութեան հայ մանկանց ոչ թէ նուազելու, այլ աւելի ևս զարգանալու վրայ է:

Ձեմարանին յանձնուելու է՝ համաձայն կտակ-աւանդ կարգադրութեան իշխան Ս. Դ. Արամելիք կազարեանի՝ կազարեանների ծննդավայր տունը Հայոց փողոցում, որի համար իշխան հոգաբարձուն յարուցել է արդէն միջնորդութիւն Բարձրագոյն հաճութիւն ստանալու համար: Տան ամբողջ եկամուտը յատկացրել է բացառապէս հայ մանկանց կրթութեան, թէ Ոռուսաստանից, թէ Պարսկաստանից և թէ Տաճկաստանից:

Ձեմարանի հարիւրամեակի առկիթով անհնար է չյիշատակել և նորա հիմնադիրների ընդհանուր գործունէութիւնը յօգուտ եկեղեցւոյ և ազգի:

Իւր Ռուսաստանում հաստատուելու օրից յաւերժայիշատակ կազարեանց տոհմը սրտացաւ հոգատարութեամբ ամբողջ դար ու կէս կարկառել է իւր ձեռքը դէպի ամեն մի ազգային գործ, դէպի ամեն մի ազգային կարիք:

Հաւատարիմ զաւակներ եկեղեցւոյ՝ նորա՝ իբրև Հայրապետական աթոռի պատուիրակներ առաջի Ռուսաց տէրութեան՝ հանդիսացել են թարգման հայ ազգի զգացմանց,

պաշտպան եկեղեցւոյ ընդհանուր իրաւանց և դարաւոր ազանութեանց. իբրև հարազատ որդիք հայ ժողովրդեան՝ նոքա նպաստել են համաձայն թելադրութեանց դժպհի և անհամբոյր ժամանակի ազատելու իրենց հայրենակիցներին մահմեդականների լծից և հալածանքից զաղթականութեամբ քրիստոնեայ Տէրութեան սահմանները, ուր կեանքն ու ինչը միանգամայն ապահով էին և անբոնաբարելի. միաժամանակ նոքա չեն զլացել նորահաստատ զաղութիւններին թէ Ռուսաստանի և թէ Հիւսիսային Կովկասի նիւթական օժանակալութիւն տալու կրթական գործի համար:

Լազարեանները անմահ յուշարձաններ են թողել երկու մայրաքաղաքներում, կառուցանելով հինգ հոյակապ եկեղեցիներ և ապահովելով նոցա նիւթապէս, որոնցից Պետերբուրգի եկեղեցու ահազին եկամուտից նպաստ են ստանում բազմաթիւ ազգային խոշոր կրթական հաստատութիւններ:

Այսպիսի անզուգական գործունէութիւնը այս անմահ ազգային հերոսների մինչև օրս չէ ստացել համազգային գնահատութիւն և շնորհակալու խոստովանութիւն:

Այն ինչ մի ազգ և մի հասարակութիւն կարող են գիտակից միութիւններ համարուել միայն այն պարագայում, եթէ զգում են պահանջ արտայայտելու իրանց երախտազիտութիւնը դէպի իրանց պատկառելի գործիչների յիշատակը:

Միւս կողմից հաստատութիւնները իրենց կեանքի յայտնի տարելիցներում պէտք են զգում հասարակական համակրութեան, առանց որի ոչ մի հաստատութիւն, որքան և զօրեղ լինին նորա հիմնական նպատակները, չի կարող բարոյապէս զարգանալ և բարգաւաճել: Իւր բեղմնաւոր կեանքի այդպիսի մի ըոպէին հասել է և Լազարեան ձեմարանը:

Եթէ ցանկալի է, որ այդ պատկառելի ալեորը, նոր ոյժ ստանալով ազգի զգացմունքների անսպառ աղբիւրից վերածնուի կրկնապատիկ եռանդով իւր դարաւոր գործը շարունակելու համար, ապա անհրաժեշտութիւն է բուռն արտայայտութիւն այդ զգացմունքների:

Եւ բնականաբար Լազարեանների յիշատակը, որոնք թէ այր և թէ կին առանց բացառութեան՝ թողել են մեծաքանակ գումարներ եկեղեցւոյ և ազգի պիտոյքների համար, չէ կարելի յարգել միայն մեղեղիներով և հանդէսներով. գորա համար պէտք է և կենդանի գործ, մնայուն և հոտտատ, ինչպէս մնայուն և կանգուն է Լազարեանների ձեռակերու ձեմարանը:

Չերդ Վեհափառութեան քաղցր ուշադրութիւնը հայցելով վերոգրեալ հանգամանքների վրայ, Լազարեան ձեմարանի հարիւրամեակի յօրելենական յանձնաժողովն խորին որդիական ակնածութեամբ դիմում է Չեզ, ընդհանուր Հայր հասարակաց, և ամենախոնարհաբար խորը ընդունել Լազարեան ձեմարանի հարիւրամեակի տօնախմբութեան գործը Չեր Հայրապետական հովանաւորութեան ներքոյ. կարգադրել, որպէս զի բոլոր հայ եկեղեցիներում կատարուի գեկտեմբերի 9-ին հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոց յաւերժայիշատակ տոհմին Լազարեանց. կարդացուեն դպրոցներում, ուր հնարաւոր է, զասախօսութիւններ տոհմի և ձեմարանի գործունէութեան մասին. բանալ հանգանակութիւն թէ Ռուսաստանում, թէ այլուր, ամբողջ ազգի կողմից մի գումար յանձնելու Լազարեան ձեմարանին «ի յաւիտենական յիշատակ երախտագիտութեան Ազգիս առ Տոհմն և առ ձեմարանն», գումարը, եթէ կլինի բարեհաճ կամքը Չերդ Վեհափառութեան, յանձնուի յօրելենական յանձնաժողովիս, գիմնազիական զասարանների համար նոր շէնք կառուցանելու, համաձայն պահանջման ժամանակի, որպէս զի ձեմարանի մեծացմամբ հնարաւորութիւն տրուի ձեմարանի վարչութեանը իրագործել Լազարեանների անկատար մնացած փափազը՝ դարձնել ձեմարանը «Ընդհանուր Ազգային կրթարան Հայոց», կըթթելով նորաբացուելի երեք զասարաններում (համաձայն ձեմարանի կանոնադրութեան) արտասահմանեան հայ մանուկներին հայացի բարբառով:

Համարձակւում ենք ընդ սմին, Վեհափառ Տէր, որ դիաբար խորը եւ, որ բարեհաճէք յարգել Չեր նուիրական

Անձին ներկայութեամբ դեկտեմբերի 9-ին յօրելենական հանդէսը:

Համբուրիւ Հայրապետական Օծեալ Աշոյգ՝ մնամ Զեղոյին Վեհափառութեան ամենախոնարհ որդի՝

ի դիմաց Յօրելենական Յանձնաժողովի Նախագահող անդամ Կորին Ա. Մամիկոնեան

1914 թ. մայիսի 26 Մուկուա.

ԱԼՔԾՈԾՆԴՐ Ա. ԿԵՑՄԵՐ ՌՇՉԵՆԻ ՎՐԾՑ ԳՐՈՒԺ ՊՍԾՎ  
ԳԵՈՐԳ Ե. ՎԵՀԱՓԵՐ ԿԵԹՈՒՂԻԿՈՍԻ ԿՈՂՄԻՑ

Բեսսարաբիայի Քիշնև քաղաքում կատարուել է յունիսի 3-ին Ալեքսանդր Ա. Կայսեր արձանի բացման հանդէսը, և Վեհափառ Հայրապետի կողմից նոյն թեմի առաջնորդ Գեր. Տ. Ներսէս արքեպիսկոպոսը դրել է արծաթեայ պսակ, որի առթիւ առաջնորդն ուղարկել է Վեհափառին հետեւել խոնարհ յայտարարութիւնը.

Նորին Վեհափառութեան Տ. Տ. ԳԵՈՐԳ Ե.

Մրազեազոյն Կարուղիկոսի Ամենայն Հայոց

Յառաջնորդէ թեմին Նոր-Նախիջեւանի եւ Բեսսարաբիոյ

Խոնաց յայտարարութիւն

Վեհափառ Հովուապետիդ տարւոյս Մայիս 14-ի հետո պարական պատուերի համաձայն պարտք էր գրւում մեզ վերայ լինել Զերդ ԱրթուրիթեԱններկայացուցիչ, Քիշնևում Մայիսի 16-ին, Ալեքսանդր Ա. Կայսեր արձանի հանդիւսաւոր բացման ժամանակ և պսակ դնել յանուն ՏեԱՌՆԴԻ Մայիսի 16-ին հանդէսը տեղի չունեցաւ, որովհետեւ Կայսերական բարեհաճ կամքով հանդէսը յետաձգուեցաւ Յունիսի 3-ին:

Յունիսի 3-ին Ն. Կ. Մեծութիւններ ՆիկոլԱՅ Բ. բարեհաճեց ժամանել քաղաքս, ԿԱՅՍԵՐՈՒՀՈՒ, Օգոստափառ ԺՄՌԱՆԳԻ և Կայսերական Ընտանիքի հետ և իիր ներկայութեամբ կատարուելով արձանի բացումը, բաղդ ու